

Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատում է՝

- A. համայնքի ղեկավարը.
- B. համայնքի ավագանին.**
- C. Կադաստրի կոմիտեն:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերը պարտադիր գույքագրում են անցնում հետևյալ պարբերականությամբ.

- A. հինգ տարին մեկ անգամ.
- B. երեք տարին մեկ անգամ.
- C. ամենամյա (տարին մեկ անգամ):**

Հողերի կառավարման ամենամյա ծրագիրը համարվում է՝

- A. համայնքի տարեկան աշխատանքային պլանի բաղկացուցիչ մասը.
- B. համայնքի գլխավոր քաղաքաշինական և հողաշինարարական պլանավորման փաստաթուղթ.
- C. համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:**

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է՝

- A. համայնքի ղեկավարը.
- B. համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա.**
- C. համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի առաջարկությամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակությունը կատարում է համայնքի ղեկավարը՝

- A. լիազոր պետական կառավարման մարմնի համաձայնությամբ.
- B. ավագանու համաձայնությամբ՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան.**
- C. ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

Մինչև համայնքների գլխավոր հատակագծերի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝

- A. կառավարության սահմանած կարգով՝ հատուկ այդ նպատակով ստեղծված ժամանակավոր միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում, լիազոր պետական կառավարման մարմնի համաձայնությամբ.**
- B. համայնքի ղեկավարի առաջարկությամբ.
- C. ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

Համայնքի գլխավոր հատակագիծը հաստատում է՝

A. Քաղաքաշինության կոմիտեն.

B. ավագանին.

C. համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Քաղաքաշինության կոմիտեն:

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները և նախագծման առաջադրանքը) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է՝

A. համապատասխան մարզպետը.

B. Քաղաքաշինության կոմիտեն.

C. ավագանին: